*« Էրզրումեցւոյ և Առաքելական Միսիոնարի Հայոց, որ է ի կարգէ Սրբոյն Անտոնի « Ժամանեցէ ի Բէշէր Վարատինն ».*

Օ։ Յ։ Ք։

*Վերապատուելի և սիրելի Հոգևոր Հօր և Եղբօր իմում ի Տէր, բազմաւ սիրով և մեծաւ կարօտիւ մատուցանեմ զՔրիստոսաւանդ ողջոյն, և այլն։*

*... Աստէն աճիւ մեծաւ տագնապին բովանդակ ազգն հայոց, մի՛ զուցէ ապստամբիցի մաճառ ազգն, և զբովանդակ ազգն մեր առաթուր հարկանիցէ, և բնաջինջ առնիցէ։ Աստ ի մեր քաղաքն եկեալ էր կոստանդինուպօլսեցի Տէր Պօղոսն, որ է որդի Արմտացի մղտեսի սարգսի հացագործի. սա աւելի քան զեօթն ամիս աստ եկաց, և ընդ երկուց պայազատ մաճառաց զբարեկամութիւն ըստացաւ ի գեօղ մի, և զբազում բարեկամութիւնս արար նոցա. վերջապէս այժմ մինչ կամեցաւ չուել աստի՝ ծանոյց նոցա զգնալն իւր. և մինն ի ն[ո]ցանէ զերիս աւուրս առ նմա եկաց աստ, և եկեր ընդ նմա, և ի չուելն նորա՝ ուղղաւորեաց զնա մինչև էանց զգիւղ մի, և ի մօրւոջ եսպան զվերոասացեալ Տէր Պօղոսն կարի անողորմաբար, և զմի վաճառական Պատի անուամբ առ ի մահ վիրաւորեաց տասամբ հարուածով կացնոյ, և մազապուրծ զերծաւ ի մահուանէ։ Այժմ կալեալ են զԱւազակն, և եդեալ են ի բանտի։ Ահա՛ այսպիսի բարեկամք են մաճառ ազգն՝ ազգին հայոց. որք ի ներքոյ պատրուակի սուտ բարեկամութեան, ջանան ըմպել զարիւնն յերակաց Հայոց։ Խնդրեմ ուրեմն, զի ըստ բաղձանաց սրտիս գրիցես և պատմիցես ինձ զկացքն Տէրութեանդ, թէ զորպիսի հանգստութիւն ունիս, և ո՞րպիսաբար կեաս այդր, և ո՞րքան հայք գտանին այդր. և զի՞արդ կեան։ Զվ.էննայի վարուչներն ասեն աւերեալ գոլ. և Պաւարուչն ընդ Ֆռանձուզին մերձեցեալք են առնուլ զՎ.էննայ. Տէր Յիսուս պարգևեսցէ զխաղաղութիւն և զմիաբանութիւն ի մէջ Թագաւորաց Քրիստոնէից։... Զկեռլայի Տէր Մինաս Աւագ Էրէցն իջուցեալ են ի պաշտօնէ, և արտաքսեալ ի քաղաքէն, որ ի քսան վեց ամաց հետէ եղեալ էր Աւագէրէց անդ, և զայնքան բարեբարութիւնս արարեալ էր քաղաքին։ Եւ այսոցիկ բնաւից պատճառն է չքահանայ մի Տէր Նիկոլ անուամբ...։*

*Նուաստագունեղ ծառայ*

*Հայր Թէոդորոս Յովաննիսեան*

*Յամի Տեառն 1741* — *կրօնաւոր և վ. ի կարգէ սրբոյն Անտ. Աբբայի*

*հոկտեմբերի 25, ի Պաշֆալով,*

*որ այլով անուամբ կոչի Էլիզապէթապօլիս*

## ԾԶ.

*Քմահաճոյ իրաւարարութեան դեր մը, զոր կ'ուզէ ստանձնել Գաղղիա, այն պարագային մէջն էր՝ երբ այլք դադրած՝ ինքն էր որ դեռ կը շարժէր զէնքը։*

*Յիշատակուած « Թէրէզիա »ն Կարոլոս Զ.ի Մարիամ–Թերեզա դուստրն է։*

Օ։ Յ։ Ք։

*Գերապայծառի և Գերյարգելւոյ Տեառն Միխիթարայ Աբբայի Հօրդ մերում, մեծաւ խոնարհութեամբ, և ըղձատոչոր բաղձանօք մատուցանեմ զորդիական ողջոյն, և զսէր, եւ այլն։*

*... Իսկ ի կողմանէ ընտրութեան կայսեր՝ ասի թէ Ֆրանձուզն կամի զթագաւորութիւնս բաժանել իւրաքանչիւրոցն ըստ արժանաւորութեան. զի Թէրէզիային Թագուհւոյն մնասցէ Աւուստրիայն, մասն ինչ ըսլէժիային, բովանդակ մեծ մաճառք, և Գրան-*